ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) տարեկան հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 7-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետը: Տեսչական մարմնի տարեկան հաշվետվությունը արտացոլում է կատարված աշխատանքները, իրավիճակի զարգացումները, ինչպես նաև փաստացի տվյալների համեմատականը նախորդ ժամանակաշրջանում իրավիճակներն արտացոլող տվյալների հետ:

2020 թվականի COVID-19 համաճարակով և 2020 թվականի սեպտեմբերից ռազմական դրությամբ պայմանավորված, Տեսչական մարմինն իր կանոնադրական գործառույթների շրջանակներում պլանավորված աշխատանքներից բացի իրականացրել է նաև մի շարք չպլանավորված աշխատանքներ:

Տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 20-ի 152-Ա հրամանով հաստատվել են Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները, և սահմանվել դրանց տարածքային կենտրոնների տեղաբաշխվածությունն՝ ըստ մարզերի: 2020 թվականի սկզբում Տեսչական մարմնում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված է եղել առավելագույնը 280 հաստիք, որից քաղաքացիական ծառայողների հաստիքները եղել են 107-ը (38,21%), իսկ քաղաքացիական աշխատանք կատարողների հաստիքները՝ 173-ը (61,79%): Նշված հաստիքներից 2019 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համալրված է եղել 199 հաստիք, որը տոկոսային արտահայտությամբ կազմել է՝ 71,07%:

Տեսչական մարմինը, հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասը, ինչպես նաև 2020թ-ի համար հաստատված գործունեության

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

ծրագիրը, քաղաքացիական աշխատանք կատարողների հաստիքները նախատեսել էր ներառել քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում:

Հաշվետու տարվա ընթացքում Տեսչական մարմինը, այս կառուցվածքով առաջին անգամ, ավարտեց Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերի մշակումը, դրանց հաստատումը կառավարման խորհրդի կողմից և սկսեց կադրային համալրվածության պրոցեսը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Տարեվերջին, Տեսչական մարմինը հասել է կադրային համալրվածության նախկինում ունեցած ամենաբարձր ցուցանիշին: Նշված հաստիքներից 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ համալրված է եղել 232-ը (որը տոկոսային արտահայտությամբ կազմել է՝ 82,85%), այդ թվում՝ 3 վարչական և 5 հայեցողական պաշտոն, քաղաքացիական ծառայող 94, քաղաքացիական աշխատանք կատարող 106, տեխնիկական սպասարկում իրականացնող 24:

Հիմք ընդունելով 2019թ-ի դեկտեմբերի 4-ի «ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-265-Ն, որի հիմքով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հուլիսի 16-ի թիվ 808-Ա որոշմամբ Տեսչական մարմնի առավելագույն 280 հաստիքների թիվը սահմանվեց 340: Այս փոփոխությունները պայմանավորված էին Տեսչական մարմնին աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողության նոր լիազորությունների վերապահմամբ, որոնց համալրումը կմեկնարկի 2021 թ-ին: Նշված փոփոխությունների արդյունքում Տեսչական մարմնում նախատեսվել է 340 հաստիք, որից վարչական պաշտոն՝ 4, պետական հայեցողական պաշտոն՝ 5, քաղաքացիական ծառայության պաշտոն՝ 264, իսկ քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ՝ 67 (այդ թվում տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ՝ 21):

Կադրային հագեցվածության, դրանց հաստիքացուցակի, քաղաքացիական ծառայողների պաշտոնների դասակարգման խնդիրների հաղթահարումից բացի, կարևոր ձեռբերում էր նաև Տեսչական մարմնի գրասենյակային տարածքների

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

փաստաթղթավորման, պետական, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի անվճար ամրագրման հարցերի կարգավորումը: Մասնավորապես՝ հաշվետու տարում Տեսչական մարմնին ամրացվել են համայանքային և պետական գրասենյակային տարածքներ՝ վերջինիս կողմից կանոնադրական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու և բյուջեի հետագա բեռը թեթևացնելու նպատակով, այդ թվում.

- Տեսչական մարմնի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների և Երևան քաղաքի տարածքային կենտրոնի աշխատանքները մեկ վայրից առավել համակարգված իրականացնելու նպատակով Երևան քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի Արարատյան փողոցի 26 հասցեում ամրացվել է 1617.4 քմ տարածք,
- Տեսչական մարմնի Հյուսիսային և Հարավային տարածքային կենտրոնների աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով ամրացվել են Տավուշի մարզ, քաղաք Իջևան, Սահմանադրության 1 հասցեում 32,60 քմ մակերեսով, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր, Նժդեհի 14 հասցեում 632,85 քմ մակերեսով և Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան, Կամոյի 5 հասցեում 152.95 քմ մակերեսով տարածքներ:
- Կոտայքի, Արմավիրի և Գեղարքունիքի մարզպետարանների կողմից անհատույց օգտագործման պայմանագրերով գրասենյակային տարածքներ են տրամադրվել Աբովյան, Արտաշատ և Գավառ քաղաքներում: Ընթացքի մեջ են Գյումրու, Կապանի և Էջմիածնի գրասենյակների ամրագրման գործընթացները:

Հաշվետու տարում ծառայողական և սպասարկման նպատակով Տեսչական մարմնի հաշվեկշռին ամրացվել է ևս 8 տրանսպորտային միջոց (ընդհանուր առավելագույն թիվը սահմանելով 19, որից ծառայողական՝ 1, սպասարկման՝ 18)՝ մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, տարածքային կենտրոնների և սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի (ՍԲՀԿ) աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Տեսչական մարմնի գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով, հաշվետու ժամանակաշրջանի սկզբից լիարժեք սկսել է գործել՝ Տեսչական մարմնի

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

պաշտոնական կայքէջը www.hlib.am հասցեով, ինչպես նաև իր լիազորությունների շրջանակում դիմում-բողոքներին արձագանքելու և ընթացք տալու, Տեսչական մարմնի կապը հանրության հետ ավելի արագ և արդյունավետ կազմակերպելու նպատակով հաշվետու ժամանակաշրջանի սկզբից գործարկվել է նոր թեժ գիծը՝ 8107 հեռախոսահամարով:

Հաշվետու տարվա վերջին, միջազգային կազմակերպության դոնորային աջակցությամբ, Տեսչական մարմնի համար պատրաստվեց www.employeeprotect.am աշխատանքային իրավունքին վերաբերող բողոքների ընդունման համակարգը, որը լիարժեք կգործարկվի 2021 թ-ին:

Տարեվերջին, Տեսչական մարմինը, հանդիսանալով ԱՊՀ երկրների աշխատանքի տեսչական մարմինների ռեգիոնալ ալյանսի անդամ, ընտրվեց որպես 2021թ-ի նախագահող երկիր:

Տեսչական մարմինը Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 755-Լ որոշման համաձայն իր կանոնադրական գործառույթների շրջանակներում 2020 թվականի ընթացքում իրականացրել է ինչպես հաշվետու տարվա համար գործունեության ծրագրով հաստատված ստորև նշված, այնպես էլ COVID 19 համաճարակով պայմանավորված աշխատանքները.

I. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության կատարողականի գնահատումն իրականացվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված և ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի թիվ 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչները և հաշվի առնելով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի թիվ 03 որոշմամբ հաստատված «ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

մարմնի գործունեության կատարողականի գնահատման մեթոդաբանությունը»: (Հավելված 1)

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տեսչական մարմինը կազմել և 2019 թվականի նոյեմբերի 22-ին Տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացրել «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի գործունեության տարեկան» Ծրագիր: Ծրագրի շրջանակներում նախատեսվել էր 2020 թվականին իրականացնել խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված 51 միջոցառում, այդ թվում.

- Տեսչական մարմնի վերահսկողության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, աշխատանքի իրավունքի՝ ներառյալ աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտներում խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված 39 միջոցառում,
- Վերը նշված ոլորտներում կանխարգելիչ և իրազեկման 12 միջոցառում:

Ծրագրի շրջանակներում նախատեսված «խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված» 51 միջոցառումից 2020 թվականին իրականացված միջոցառումների մանրամասն նկարագիրը տրված է Հավելված 2-ում:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմինը, ըստ չորս վերահսկողության բնագավառների, վարել է տվյալների բազա՝ ըստ Տեսչական մարմնի կողմից վերահսկվող տնտեսավարող

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

սուբյեկտների և ռիսկայնության աստիճանը որոշող չափանիշներով՝ վերջիններիս տրված գնահատականի վերաբերյալ: Տվյալների բազայի ձևավորման համար Տեսչական մարմնի կողմից հավաքագրվել է համապատասխան տեղեկատվություն՝ ինչպես տեսչական մարմնի կանոնադրական գործառույթների իրականացման արդյունքում առկա տեղեկատվությունից, այնպես էլ Տեսչական մարմնի տեղեկատվական բազայում չընդգրկված և ստուգում իրականացնող պետական մարմինների միջև տնտեսավարող սուբյեկտների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման հիման վրա իրենց տվյալների բազաներում առկա համապատասխան տեղեկատվությունից: Բազայում առկա տեղեկատվության հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի N 1124-Ն որոշման պահանջների համաձայն ըստ տնտեսավարողների և ըստ ոլորտների հաշվարկվել են տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը և դասակարգվել ըստ բարձր, միջին և ցածր ռիսկայնության: Այսպիսով, 2020 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտում ռիսկի առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծությունը իրականացվել են բազայում առկա տեղեկատվության և ռիսկայնության չափորոշիչներն սահմանող իրավական ակտերի կիրառմամբ:

Վերը նշված բազայի հիման վրա կազմվել և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 15-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» Ծրագիրը: Ծրագրի շրջանկներում 2020 թվականին Տեսչական մարմնի կողմից իրականացվել են թեմատիկ ստուգումներ: Նշված ստուգումների արդյունքում արձանագրվել են տնտեսավարող սուբյեկտներում ձեռնարկատիրական գործունեության անհամապատասխանությունը գործող իրավական ակտերի նորմերին, ինչպես նաև արձանագրվել են դեպքեր, երբ տնտեսավարող սուբյեկտներում խախտումներ չեն արձանագրվել: Այսպես, 2020 թվականի ընթացքում իրականացված ստուգումների

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

արդյունքների վերլուծությունից և Ծրագրում արտացոլված տեղեկատվության համադրումից պարզվել է, որ.

- **դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտ**

Տեսչական մարմնի կողմից 2020 թվականին 64 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել է ստուգում, որոնք Ծրագրում ներառված են բարձր ռիսկայնությամբ: Նշված տնտեսավարող սուբյեկտներում իրականացված թեմատիկ ստուգման արդյունքում 12 տնտեսավարողների մոտ արձանագրվել են խախտումներ, իսկ 51 տնտեսավարողների մոտ խախտումներ չեն արձանագրվել: Արդյունքում, մինչև ստուգումը դասակարգված բարձր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների քանակը ստուգման ավարտից հետո նվազել է 51-ով:

- **աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ոլորտ**

Տեսչական մարմնի կողմից 2020 թվականին 21 տնտեսավարող սուբյեկտներում իրականացվել է ստուգում, որոնցից 7-ը Ծրագրում ներառված է բարձր ռիսկայնությամբ, իսկ 14-ը միջին ռիսկայնությամբ: Նշված տնտեսավարող սուբյեկտներում իրականացված թեմատիկ ստուգման արդյունքում բարձր ռիսկայնությամբ 7 տնտեսավարողների մոտ արձանագրվել են խախտումներ, իսկ միջին ռիսկայնությամբ 14 տնտեսավարողներից խախտումներ են արձանագրվել 10 տնտեսավարողների մոտ: Արդյունքում, մինչև ստուգումը դասակարգված բարձր ռիսկայնությամբ տնտեսավարող սուբյեկտների քանակը ստուգման ավարտից հետո ավելացել է 10-ով:

Տեսչական մարմնի կողմից 2020 թվականին իրականացված թեմատիկ ստուգման արդյունքները, որպես վիճակագրական տեղեկատվություն կարող են օգտագործվել 2021 թվականին նույնաբովանդակ տվյալների (2021 թվականին իրականացված ստուգման) համադրման և վերլուծության համար:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

IV. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի իրավասությանը վերաբերող իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են կազմակերպվել մամուլի հաղորդագրությունների տեսքով, «Թեժ գիծ» ծառայությունով, հարցազրույցների ու ասուլիսների կազմակերպմամբ, ինչպես նաև Տեսչական մարմնի ֆեյսբուքյան պաշտոնական էջով ստացված հարցադրումներին ի պատասխան:

Հրապարակումները հիմնականում եղել են COVID-19 կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի, Հայաստանի Հանրապետության Պարետի 2020 թվականի մարտի 31-ի թիվ 27 և մայիսի 3-ի թիվ 63 որոշումներով սահմանված պարտադիր պահանջների վերաբերյալ, ինչպես նաև Պարետի որոշումներով սահմանված նորմերի կատարման նկատմամբ մշտադիտարկումների, վերջինների արդյունքում տնտեսավարողների գործունեության ժամանակավոր կասեցումների մասին: Տեսչական մարմնի կողմից 8 760 տնտեսավարող սուբյեկտները էլեկտրոնային փոստի միջոցով իրազեկվել են Պարետի որոշումների մասին:

Հրապարակվել են իրազեկման նյութեր՝ եղանակային պայմաններով պայմանավորված, ամռան շրջանում սանիտարահամաճարակային նորմերի պահպանման, աղիքային վարակներից խուսափելու վերաբերյալ, ինչպես նաև պարետի որոշումների, կառավարության նիստերի մասին: Տեսչական մարմնի ղեկավարի կողմից գրություններով իրազեկվել են նաև մարզպետները և քաղաքապետերը:

Տեսչական մարմնի «Կայուն համայնքներ» ծրագրի հետ համատեղ պատրաստվել է սոցիալական հոլովակ՝ հանրային և զբոսաշրջային վայրերում կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու վերաբերյալ:

Ըստ լրահոսի մոնիթորինգի ծրագրի՝ Տեսչական մարմնի պաշտոնական ամեն հաղորդագրությունը տարածվում է միջինում 50 լրատվամիջոցի կողմից: Ստացված

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

հարցադրումներին ի պատասխան խորհրդատվությունն ու պարզաբանումները հիմնված են եղել մի շարք իրավական նորմերի վրա:

Վերջին հրապարակումներն առնչվել են Արցախի պատերազմին: Նյութերը մեծամասամբ տեղադրվել են նաև Տեսչական մարմնի պաշտոնական կայքում:

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է **1005** իրազեկման աշխատանք ստորև նշված ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների շրջանում և հանրության համար, այդ թվում ըստ ոլորտների.

- **560** իրազեկման աշխատանք **բնակչության սանիտարահամաճարակային** անվտանգության ապահովման ոլորտում, որից 426՝ կորոնավիրուսային վարակով պայմանավորված,
- **414** իրազեկման աշխատանք **աշխատողների առողջության պահպանման** և **անվտանգության** ապահովման ոլորտում,
- **22** իրազեկման աշխատանք **դեղերի շրջանառության և դեղագործական** ոլորտում,
- **9** իրազեկման աշխատանք **բժշկական** սպասարկման ոլորտում,

Հաշվետու ժամանակում իրազեկման միջոցառումների շրջանակներում իրականացվել են նաև ստորև նշված աշխատանքները՝

- **47՝** նկարահանում՝ հաղորդման հյուր,
- **80՝** Տեսչական մարմինների ստուգումների վերաբերյալ,
- **11՝** ԶԼՄ-ներին տրված մեկնաբանություններ:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129



V. ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի խորհրդատվական աշխատանքների գերակշիռ մասը հաշվետու ժամանակահատվածում կազմել են սեփական նախաձեռնությամբ իրականացված խորհրդատվական գործունեությունները, որի ժամանակ լուսաբանվել են ոլորտներին վերաբերվող ընդհանուր բնույթի հարցեր: Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **5 616** խորհրդատվական աշխատանքներ (այդ թվում «**Թեժ գիծ» ծառայությամբ ստացված հարցերի վերաբերյալ),** որից ըստ չորս ոլորտների.

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **2 998** խորհրդատվական աշխատանքներ, որից

- **1 599-ը** գրություններ են ուղարկվել համապատասխան բժշկական հաստատություններին՝ COVID-19 համաճարակով պայմանավորված վարակի ներթափանցման տեսանկյունից համաճարակային անբարենպաստ երկրներից ժամանած քաղաքացիների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և Հայաստանի Հանրապետության Պարետի 2020թ-ի մարտի 31-ի թիվ 27 և մայիսի 3-ի

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

թիվ 63 որոշումներով սահմանված պարտադիր պահանջների պահպանման վերաբերյալ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 դեկտեմբերի 2002թ-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերի և կանոնների 3.2 կետով սահմանված պահանջների վերաբերյալ, ինչպես նաև ԱՆ 17-Ն հրամանով սահմանված նորմերի վերաբերյալ: Գրություններ են ուղարկվել նաև մարզպետներին՝ ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի № 12-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» №2.2.4-016-17 սանիտարական կանոնների և նորմերի 46 և 48 կետերով սահմանված պահանջների պահպանման նպատակով համայնքների ղեկավարներին խմելու ջրի նմուշներում հայտնաբերված շեղումների և իրականացվող միջոցառումների վերաբերյալ,

- **1399-ը՝** թեժ գծով ստացված հեռախոսազանգերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ՝ COVID-անվտանգության կանոնների պահպանման, պաշտպանիչ միջոցներ չկրելու, սոցիալական հեռավորությունը չպահպանելու վերաբերյալ: Զանգեր են ստացվել նաև աղմուկի վերաբերյալ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի, հյուրանոցներում և հանգստյան տներում անվտանգության կանոնները ոչ պատշաճ պահպանելու վերաբերյալ:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **2 468** խորհրդատվական աշխատանքներ, որից **1 790-ը՝** խորհրդատվական աշխատանքներ աշխատողների

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

առողջության պահպանման, անվտանգության ապահովման վերաբերյալ և Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշմամբ պայմանավորված հարկադիր պարապուրդի վճարման կարգի, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրությամբ պայմանավորված աշխատանքների հեռավար կազմակերպման կարգի:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված գործատուի նախաձեռնությամբ պայմանագրի լուծման կարգի վերաբերյալ, **678-ը՝** թեժ գծով ստացված հեռախոսազանգերի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ:

Բարձրացված հարցերի մեծ մասը վերաբերվել են աշխատողների նախնական և պարբերական բժշկական զննության կազմակերպմանը, աշխատողների աշխատավարձի, հավելավճարների վճարմանը, աշխատաժամանակին և այլն: Հնչեցրած հարցերին ՀՀ կառավարության 2004թ-ի հուլիսի 15-ի N 1089-Ն որոշման շրջանակներում տրվել են պարզաբանումներ:

Տնտեսավարողների / սպառողների կողմից բարձրացված հարցերի մեծ մասը վերաբերել է նաև.

- Հայաստանի Հանրապետության պարետի 31.03.2020թ. № 27 որոշման 3-րդ հավելվածով և № Ց/17-2020 ցուցմամբ սահմանված պարտադիր պահանջներին,

- Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին որոշմամբ պայմանավորված հարկադիր պարապուրդի վճարման կարգին:

Տնտեսավարողների/սպառողների կողմից պահանջված տեղեկատվությունը հիմնականում պայմանավորված է եղել Հայաստանի Հանրապետությունում գործող և տվյալ ոլորտները կանոնակարգող օրենսդրության պահանջների իրազեկված լինելու և վերջիններս ճիշտ կիրառելու, հավանական խախտումները բացառելու նպատակով:

Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտ

- Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **52** խորհրդատվական աշխատանքներ, որից **18-ը՝** «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և 2019 թվականի օգոստոսի 15-

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

ի ՝ «Դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) կարգը, դեղատոմսերի ձևերը, ինչպես նաև դեղերի և դեղանյութերի հաշվառման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 1402-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1080-Ն որոշման շրջանակներում դեղերի գրանցման, ներմուծման, մեծածախ և մանրածախ իրացման, դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների հետ կապված դրույթներին, ինչպես նաև դեղատոմսով բաց թողնվող դեղերի և դեղատանը ժամկետնանց դեղը պահպանելու վերաբերյալ, իսկ «թեժ գծով» ստացված **34** հեռախոսազանգերին տրվել են պարզաբանումներ:

Բժշկական սպասարկման ոլորտ

✓ Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **98** խորհրդատվական աշխատանքներ, որից **79-ը՝** «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին թիվ 35-Ն հրամանի և «Ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ-ի նոյեմբերի 6-ի N 715 որոշման շրջանակներում՝ բժշկական փաստաթղթերի լրացման և վարման կարգի պահանջների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունում կիրառվող բժշկական փաստաթղթերը ՀՀ օրենսդրությամբ հաստատված ձևերին համապատասխանության վերաբերյալ, իսկ «թեժ գծով» ստացված **19** հեռախոսազանգերին տրվել են պարզաբանումներ:

Տնտեսավարողների/սպառողների շրջանում Տեսչական մարմնի կողմից իրականացված խորհրդատվական աշխատանքների իրականացման արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների շրջանում բարձրացել է իրազեկվածության մակարդակը:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Տեսչական մարմնի «**Թեժ գիծ**» **ծառայությունը** 2020 թվականին ստացել է ավելի քան **2500** զանգ՝ 2019-ի համեմատ ավելի քան 7 անգամ ավելի: Զանգերի թիվը կտրուկ աճել է կորոնովիրուսի համաճարակը Հայաստանում արձանագրելուց հետո՝ արտակարգ դրության հայտարարումից հետո: Բացի Տեսչական մարմնի բուն գործառույթներին առնչվող հարցերով հետաքրքրվելուց՝ քաղաքացիների հարցերն ու մտահոգություններն առավելապես վերաբերել են երկիր մուտք գործելու ընթացակարգերին, ինքնամեկուսացմանը, պարետի որոշումներին, սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին, Տեսչական մարմնի մշտադիտարկման արդյունքում արձանագրված խախտումների հիմքով տնտեսավարողների գործունեության կասեցման որոշումներին և այլն: 2020 թվականի մայիս ամսին պարետի որոշմամբ, արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված, ՀՀ ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ սահմանվել են ժամանակավոր սահմանափակումներ: Տեսչական մարմնին լիազորվել է ապահովել սահմանված կանոնների պահպանման վերահսկողությունը: Ելնելով այս գործառույթներից՝ մայիսին գրանցվել են տարվա ամենամեծաթիվ զանգերը՝ **678**:



☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Զանգերի մեծ հոսք է գրանցվել ամենատարբեր ոլորտների տնտեսավարողների մոտ COVID-անվտանգության կանոնների պահպանման, պաշտպանիչ միջոցներ չկրելու, սոցիալական հեռավորությունը չպահպանելու եւ այլնի հետ կապված: Զանգերը նաև սեզոնային բնույթ են կրել՝ ամռանն ավելացել են աղմուկի, հյուրանոցներում և հանգստյան տներում անվտանգության կանոնները ոչ պատշաճ պահպանելու հետ կապված զանգերը: Տարվա ընթացքում աճի նկատելի միտում են ունեցել աշխատանքային իրավահարաբերություններին առնչվող հարցերը՝ պայմանավորված Տեսչական մարմնի նոր լիազորություններով և ընթացիկ իրողություններով՝ համավարակ, պատերազմ: Տարվա երկրորդ կեսին՝ արտակարգ դրությունից կարանտինի անցնելու և ռազմական դրության շրջանում, որոշակիորեն փոխվել է զանգերի բնույթը: Զանգերի մի մեծ խումբ վերաբերել է ՀՀ մուտք գործելիս ինքնամեկուսացման և կորոնավիրուսի թեստը հանձնելու մասով փոփոխությանը:

Թեժ գծով ստացված 2500 զանգերի բաշխումն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը՝

- Դեղերի վերահսկողություն ոլորտում՝ **34**,
- Բուժսպասարկման վերահսկողություն ոլորտում՝ **19**,
- Հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության վարչություն՝ **1399**, որից **963՝ կորոնավիրուսային** վարակով պայմանավորված,
- Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության վարչություն՝ **678**,
- Տեսչական մարմնի գործառույթից դուրս՝ **370:**

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129



VI. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի կողմից իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ իրազեկման, խորհրդատվության միջոցով, ՀՀ Պարետի որոշման համաձայն հանրային առողջության պահպանման նպատակով տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացվել են մշտադիտարկումներ, համաձայն ՀՀ Տեսչական մարմնի ղեկավարի մշտադիտարկում իրականացնելու մասին հրամանների: Ինչպես նաև իրականացվել են ստուգայցեր՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների և ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը պարզելու նպատակով:

☎ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Մշտադիտարկում

Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված ՀՀ պարետի որոշման պահանջների պահպանումը պարզելու նպատակով՝ մշտադիտարկում իրականացնելու մասին Տեսչական մարմնի ղեկավարի հրամանների համաձայն 2020 թվականի մարտ ամսից մինչև սեպտեմբերի 11-ը ներառյալ տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացվել են **22 520**՝ մշտադիտարկումներ: ՀՀ պարետի 2020թ. մայիսի 3-ի N 63 որոշման պահանջները խախտած կազմակերպությունների գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ ներկայացվել են զեկուցագրեր, որոնց հիման վրա ՀՀ պարետի որոշմամբ ժամանակավորապես **կասեցվել են թվով 2 866** տնտեսավարող սուբյեկտների գործունեություն: Մշտադիտարկումների արդյունքում հայտնաբերված հաճախ կատարվող խախտումներից են՝ հաճախորդների հետ շփվող անձանց դիմակներ և ձեռնոցներ չկրելը, ջերմաչափման գրանցամատյանի բացակայությունը, փակվող աղբամանների բացակայություն, ախտահանման ոչ պատշաճ իրականացում: Խախտումների հիմնական պատճառն է իրազեկված չլինելը:

Ստուգայց

Ստուգայցները մեկնարկել են արդեն Հայաստանի Հանրապետությունում հայտարարված Կարանտինի ժամանկահատվածում՝ 2020 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2021 թվականի հունվարի 11-ը: Հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից իրականացվել են **10 330 ստուգայցեր:** Ըստ այդ որոշման ստուգայցերի ընթացքում դիտարկվել են՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 04-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող» N 3.1.2-001-20 սանիտարական կանոնների և ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 23-Ն հրամանով հաստատված «Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, կիրառման դեպքերն ու կարգը» սանիտարահամաճարակային անվտանգության կանոնների պահանջների պահպանումը: Ստուգայցերի ընթացքում բացահայտված **խախտումների** քանակը՝ **1 411**,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

նշանակված **նախազգուշացումների** քանակը՝ **516, տուգանվել են 8** տնտեսավարող սուբյեկտներ, ընդհանուր առմամբ սահմանվել է **800 000** ՀՀ դրամի տուգանք:

Այսպիսով, Տեսչական մարմնում իր իրավասությանը վերաբերող իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ իրականացվել են **39 098 կանխարգելիչ** միջոցառումներ, այդ թվում ըստ ոլորտների.

- **Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝ 18 482 կանխարգելիչ** միջոցառումներ, այդ թվում՝

- **560** իրազեկում,
- **2 998** խորհրդատվություն, որից **1 399-ը** թեժ գծով ստացվող զանգեր,
- **8 712 մշտադիտարկում,**
- **6 212 ստուգայցեր:**

- **Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝ 14 266 կանխարգելիչ** միջոցառումներ, այդ թվում՝

- **41** իրազեկում,
- **2 468** խորհրդատվություն, որից **678-ը** թեժ գծով ստացվող զանգեր,
- **9 399 մշտադիտարկում,**
- **2 358 ստուգայցեր:**

- **Դեղերի շրջանառության և դեղագործական ոլորտում՝ 4 609 կանխարգելիչ** միջոցառումներ, այդ թվում՝

- **22** իրազեկում,
- **52** խորհրդատվություն, որից **34-ը** թեժ գծով ստացվող զանգեր,
- **3 087 մշտադիտարկում,**
- **1 448 ստուգայցեր:**

- **Բժշկական սպասարկման ոլորտում՝ 1 741 կանխարգելիչ** միջոցառումներ, այդ թվում՝

- **9 իրազեկում**,
- **98 խորհրդատվություն**, որից **19-ը** թեժ գծով ստացվող զանգեր,

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- **1 322 մշտադիտարկում,**
- **312 ստուգայցեր**:



Տեսչական մարմնի

Սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերի

կողմից իրականացված կանխարգելիչ աշխատանքների վերաբերյալ

Տեսչական մարմնի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի, Մեղրիի, Բավրայի, «Շիրակ» օդանավակայանի, Բագրատաշենի, Այրում-Ջիլիզայի և Գոգավան-Պրիվոլնոյեի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետերում (այսուհետ՝ ՍԲՀԿ) հերթափոխային եղանակով ապահովվել է **24 ժամյա ուժեղացված** ռեժիմով աշխատանքը՝ պայմանավորված COVID-19 վարակի պանդեմիայով և իրականացվել են կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում. ՍԲՀԿ-ի հերթափոխների կազմն ու աշխատակիցների քանակը պարբերաբար փոփոխվել է՝ պայմանավորված այլ ՍԲՀԿ-երից գործուղված աշխատակիցների, սպասվող չվերթների և ուղևորների քանակով, ժամանման երկրներով, Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով ու ցուցումներով:

☎ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

COVID-19 վարակի պանդեմիայով պայմանավորված ՍԲՀԿ-ները անցել են ուժեղացված աշխատանքային ռեժիմի դեռևս 2020 թվականի հունվարի 24-ից մինչ օրս:

- **Ըստ ՍԲՀԿ-ի տրված տեղեկատվության**, 2020 թվականի մարտ ամսից հսկողություն է իրականացվել տարբեր երկրներից ժամանած **2 508** չվերթով, **199 946** ավտոտրանսպորտային միջոցներով և **1 447** գնացքներով ժամանած **587 885** ուղևորների և անձնակազմի նկատմամբ: Իրականացվել է ջերմաչափում, վիզուալ զննում, անհրաժեշտության դեպքում՝ հարցում, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն: **283 475** ուղևորին, գնացքի և օդանավի անձնակազմի անդամներին տրամադրվել են ծանուցագրեր և ինքնամեկուսացման տեղեկաթերթիկներ:

- Հայտնաբերվել է վարակիչ հիվանդությունների ախտանշաններ ունեցող (ջերմություն, ցանավորում) **304** անձ, որոնցից **258** կորոնավիրուսային վարակի կասկածով հոսպիտալացվել են:

- Կազմակերպվել է **2 761** տարանցիկ ուղևորների, այդ թվում նաև Վրաստանի Հանրապետության քաղաքացիների, սահմանված կարգով դիմավորումը և ուղեկցումը դեպի նախատեսված փոխադրամիջոցներ:

- Հաշվետու ժամանակահատվածում իրակացվել է համապատասխան հսկողություն **545** մարդկային աճյուն տեղափոխվան նկատմամբ:

- Ուղևորների հոսքով պայմանավորված՝ մշտապես վերահսկվել են ՍԲՀԿ-ներում կատարված ախտահանման աշխատանքները, տրվել են համապատասխան ցուցումներ և անհրաժեշտ խորհրդատվություն:

- «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ՍԲՀԿ-ն սերտ համագործակցել է «Զվարթնոց» Մ/Օ-ում գործող այլ ծառայությունների և պետական սահմանի անցման կետում հսկողություն և վերահսկողություն իրականացնող կառույցների աշխատակիցների հետ: Նույն աշխատաձևը որդեգրել են նաև մյուս ՍԲՀԿ-ները: Կախված արագ փոփոխվող հանգամանքներից, պարբերաբար փոփոխվել և համաձայնեցվել են համատեղ ընթացակարգերը, պարբերաբար տեղեկացվել են վարակիչ հիվանդությունների, հատկապես COVID-19 վարակի, կլինիկական նշանների,

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

կասկածելի դեպքերի (հիվանդների) վաղ հայտնաբերման, կանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման, աշխատակիցների անհատական պաշտպանության և հայտնաբերման դեպքում պատասխան գործողությունների վերաբերյալ:

Ուժեղացվել է հակահամաճարակային ռեժիմը ՍԲՀԿ-ի սենք-շինություններում, տեղադրվել է փակ տիպի բակտերիոցիդ լամպ, գործարկվել է նատրիումի հիպոքլորիդի արտադրություն, պարբերաբար ախտահանվել են բոլոր սենքերը:

Տեսչական մարմինը բացի հիմնական իր կանոնադրական գործառույթներից, ՀՀ վարչապետի հանձնարարությամբ 2020 թվականի հունիսի 12-ից մինչև նոյեմբերի 3-ը, ստանձնել է ՀՀ տարածք ժամանողների տվյալների մուտքագրումը ԱՐՄԵԴ համակարգ: Այս նպատակով Տեսչական մարմինը ընդունել է արտահաստիքային ևս 27 փորձագետ, մշակել և մուտքագրել է ՀՀ տարածք ժամանողների **102 942** տվյալներ՝ տրամադրելով նաև ուղևորների հասցեական քարտեր և մեկուսացման ու ինքնամեկուսացման ծանուցագրեր:

Ելնելով ստեղծված իրավիճակից, ՀՀ կառավարության կողմից կարևորություն է տրվել պետական սահմանի անցման առաջին գոտում իրականացվող կանխարգելիչ միջոցառումների առավել արդյունավետ կազմակերպմանը: Նշվածի համաձայն՝ Մեղրիի և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի ՍԲՀԿ-ներին հատկացվել են տարածքներ՝ զննման սենյակներ կառուցելու նպատակով: Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետի զննման սենյակը (հավաքովի կառույց՝ տաղավար) Տեսչական մարմնի միջոցներով արդեն կառուցվել և շահագործվում է, իսկ «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետի կառուցման աշխատանքն ընթացքի մեջ է:

VII. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի N 1124-Ն որոշման հիման վրա ըստ ոլորտների և ըստ տնտեսավարող սուբյեկտների բազա ստեղծելու նպատակով Տեսչական մարմնի կողմից հավաքագրվել են տվյալներ: Նշված բազայի հիման վրա հաշվարկվել է ռիսկայնությունը և տնտեսավարող սուբյեկտները դասակարգվել են ըստ բարձր, միջին և ցածր ռիսկայնության և ըստ ոլորտների: Տեսչական մարմնի կողմից վարվող բազայի հիման վրա կազմվել և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 15-Լ որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացվելիք ստուգումների» Ծրագիրը: Ծրագրում նախատեսվել է Տեսչական մարմնի կողմից 2020 թվականի ընթացքում իրականացնել թվով 191 ստուգումներ 175 տնտեսավարող սուբյեկտների մոտ (ըստ չորս բնագավառների/ոլորտների), որոնցից՝ 134 բարձր ռիսկայնությամբ, 57 միջին ռիսկայնությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու տարվա սկզբին Տեսչական մարմինը չուներ հաստատված ստուգաթերթեր, ստուգումների ուղեցույցեր, ինչպես նաև 2020 թվականի առաջին եռամսյակում չպլանավորված, COVID-19 համաճարակով պայմանավորված Տեսչական մարմնի ծանրաբեռնվածությունը, ստուգումները սկսվել են 2020 թվականի 3-րդ եռամսյակից: Ստուգման ընթացքի վրա բացասական ազդեցություն է ունեցել նաև ռազմական դրությունը, ինչով պայմանավորված ժամանակավոր կասեցվել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող տնտեսավարող սուբյեկտներում իրականացվող և իրականացվելիք ստուգումները: Ռազմական դրությամբ պայմանավորված ժամանակավոր կասեցվել են նաև այն տնտեսավարող սուբյեկտներում իրականացվող և իրականացվելիք ստուգումները, որտեղ ինչ-ինչ հանգամանքներում հնարավոր չէր իրականացնել:

Առաջին անգամ Տեսչական մարմնի կողմից ստուգումներ իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

«Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» թիվ 718-Ն որոշմամբ հաստատվել են սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային, դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության, բժշկական օգնության և սպասարկման, աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման բնագավառներում ռիսկի հիման վրա ստուգումների ստուգաթերթերը, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի մայիսին: Սակայն, նշված որոշմամբ հաստատվել են ոչ բոլոր ոլորտների և ոչ բոլոր ՏԳՏԴ-ի ստուգաթերթերը, Ստուգաթերթերը համալրվել են մասնակի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի թիվ 1437-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2046-Ն որոշումներով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեռևս ոչ բոլոր ստուգաթերթերն են հաստատված (վերջիններս ընթացքի մեջ են), Ծրագրում նախատեսված 175 տնտեսավարող սուբյեկտներից Տեսչական մարմնի ղեկավարի կողմից 2020 թվականին հրապարակվել են հանձնարարագրեր 138 տնտեսավարող սուբյեկտներում թեմատիկ ստուգում իրականացնելու նպատակով, որը կազմում է նախատեսված ստուգման 79 %-ը:

2020 թվականին Ծրագրով չնախատեսված ստուգում Տեսչական մարմինը չի իրականացրել: Մեկ ստուգման ժամանակ մարդկային ռեսուրսների քանակը կազմում է 2 ստուգող: Մեկ ստուգման միջին տևողությունը կազմում է 7-15 աշխատանքային օր՝ հաշվի առնելով նաև հանձնարարագրերով ստուգման ժամկետի երկարաձգումները ևս 10 անընդմեջ աշխատանքային օրով:

2020 թվականին ավարտվել են 85 տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացվող թեմատիկ ստուգում (հրապարակված հանձնարարականների 61,5%-ը), որից 29-ը ստուգման ակտ, 53-ը տեղեկանք և 2 զեկուցագիր, 1 տնտեսավարող սուբյեկտ՝ սնանկ, ընթացքի մեջ է 21 թեմատիկ ստուգում: Ընթացքի մեջ է 21 թեմատիկ ստուգում, որը

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

կավարտվի 2021 թվականին: Այդ թվում ըստ ոլորտների, ըստ ռիսկայնության և ըստ թեմատիկ ստուգման արդյունքների.

- **դեղերի վերահսկողություն ոլորտ**

Նախատեսվել էր 87 թեմատիկ ստուգում, հրապարակվել է 85 հանձնարարագիր, 2020 թվականին ավարտվել է 64 թեմատիկ ստուգում, որից 12-ը ստուգման ակտ, 51-ը տեղեկանք և 1 տնտեսավարող սուբյեկտ՝ սնանկ, ընթացքի մեջ է 21 թեմատիկ ստուգում:

- **բուժսպասարկման վերահսկողություն ոլորտ**

Նախատեսվել էր 21 թեմատիկ ստուգում, հրապարակվել է 13 հանձնարարագիր, ընթացքի մեջ է 13 թեմատիկ ստուգում:

- **հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության ոլորտ**

Նախատեսվել էր 45 թեմատիկ ստուգում, հրապարակվել է 16 հանձնարարագիր, ընթացքի մեջ է 16 թեմատիկ ստուգում:

- **աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերահսկողության ոլորտ**

Նախատեսվել էր 38 թեմատիկ ստուգում, հրապարակվել է 28 հանձնարարագիր, 2020 թվականի ավարտվել է 21 թեմատիկ ստուգում, որից 17-ը ստուգման ակտ, 2-ը տեղեկանք և 2 զեկուցագիր, ընթացքի մեջ են 7 թեմատիկ ստուգում:

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107



Ամփոփելով Տեսչական մարմնի կողմից 2020 թվականին իրականացված թեմատիկ ստուգումները՝ հրապարակված 138 հանձնարարագրերից 2020 թվականին ավարտվել են 85 ստուգում, իսկ 53 ստուգում ընթացքի մեջ են, որոնք սկսվել են հաշվետու տարում և կավարտվեն 2021 թվականի առաջին եռամսյակում (պայմանավորված ստուգումների կասեցումներով):

2) ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԴՐԱՆՔ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Տեսչական մարմինը հաշվետու ժամանակահատվածում ստացել է **426** դիմումներ և բողոքներ, որոնցից օրենքով սահմանված կարգով **44** վերադարձվել է, **44** վերահասցեագրվել է, **164**-ին տրվել են համապատասխան պարզաբանումներ: Քաղաքացիներից ստացված շուրջ 167 դիմումների հիման վրա իրականացվել է վարչական վարույթներ, որոնցով կազմակերպվել են վարչական լսումներ:

Այսպես, ըստ ոլորտների.

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129



✓ Օրենքով սահմանված կարգով հաշվետու տարում Տեսչական մարմնի կողմից ընդամենը հարուցվել է **911 վարչական վարույթ**, այդ թվում Տեսչական մարմնի նախաձեռնությամբ (այդ թվում կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզելու նպատակով)՝ **744,** դիմումի հիման վրա՝ **167**: Խախտումները վերացնելու համար տրվել է **270 կարգադրագիր**՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ **500 վարույթ կարճվել է,** այդ թվում **36**՝ դիմումի հիմքով: Վարչական վարույթների արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է **315** որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է **33 001 444** ՀՀ դրամի տուգանք, ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է **18 176 869** ՀՀ դրամ:

Այսպես, ըստ ոլորտների.

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է **292 վարչական վարույթ** (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ **235**, դիմումի հիման վրա՝ **57**): Խախտումները վերացնելու համար տրվել է **122** կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, **116** վարչական վարույթ կարճվել է, այդ թվում 15՝ դիմումի հիմքով:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է **146** որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է **7 170 000** ՀՀ դրամի տուգանք:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է **149 վարչական վարույթ** (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ **56**, դիմումի հիման վրա՝ **93**): Հարուցված վարչական վարույթներից՝ խախտումները վերացնելու համար տրվել է **56** կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով՝ **76** վարույթ կարճվել է, այդ թվում **21**՝ դիմումի հիմքով: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է **64** որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է **4 096 444** ՀՀ դրամի տուգանք:

Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է **283 վարչական վարույթ** (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ **276**, դիմումի հիման վրա՝ **7**): Խախտումները վերացնելու համար տրվել է **28** կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով **226** վարույթ կարճվել է: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է **45** որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է **19 060 000** ՀՀ դրամի տուգանք:

Բժշկական սպասարկման ոլորտ

Տեսչական մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով հարուցվել է **187 վարչական վարույթ** (Տեսչական մարմնի նախաձեռնությամբ **177**, դիմումի հիման վրա՝ **10**): Խախտումները վերացնելու համար տրվել է **64** կարգադրագիր՝ առաջադրանք տալու վերաբերյալ, խախտման բացակայության հիմքով **82** վարույթ կարճվել է: Վարչական վարույթների արդյունքում ընդունվել է **60** որոշում տուգանք նշանակելու մասին և սահմանվել է **2 675 000** ՀՀ դրամի տուգանք:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129



3) ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՎԵՐՀԱՆԵԼ ԵՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեսչական մարմնի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվող գործունեության արդյունքում պարզվել է, որ տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարվող խախտումները պայմանավորված են մինչ այդ Տեսչական մարմնի կողմից վերահսկողության չորս ոլորտներում պատշաճ վերահսկողության բացակայությամբ, ինչպես նաև օրենսդրության պահանջների չիմացությամբ և ոչ բավարար իրազեկմամբ (մասնավորապես՝ COVID-19 համաճարակով պայմանավորված և Պարետի որոշումներով), և ոլորտները կանոնակարգող իրավական ակտերի պահանջների ոչ պատճաշ պահպանումն ու իրականացումը՝ որոշ տնտեսավարող սուբյեկտների կողմից: Այդ թվում ըստ ոլորտների.

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

• **Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

✓ ՀՀ-ում չգրանցված և ժամկետանց դեղերի իրացում, դեղատոմսերի իրացում չսահմանված ձևաթղթերի վրա,

✓ ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 15-ի «Դեղատոմսեր գրելու, դեղեր բաց թողնելու (ներառյալ էլեկտրոնային եղանակով) կարգը, դեղատոմսերի ձևերը, ինչպես նաև դեղերի և դեղանյութերի հաշվառման կարգը սահմանելու վերաբերյալ:

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է **45** որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է **19 060 000** ՀՀ դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է **7 335 000** ՀՀ դրամ:

Բժշկական սպասարկման ոլորտում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումներն են՝

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված 5-րդ հավելվածի կետ 3-ի 2-րդ ենթակետի, 7-րդ, 8-րդ և 20-րդ կետերի հաճախակի խախտումներ,

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի թիվ 03-Ն հրամանի համաձայն չի ապահովվում թափոնների անվտանգ գործածություն,

✓ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի հուլիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մի շարք բժշկական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» թիվ 35-Ն հրամանը,

✓ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդված, 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ կետի 3-րդ ենթակետ:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է **60** որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է **2 675 000** ՀՀ դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է **1950000** ՀՀ դրամ:

- **Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում** հաշվետու ժամանակահատվածում տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները՝

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով գրասենյակային պայմաններում տնտեսական գործունեություն ծավալելու ընթացքում կիրառվող» ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոններով սահմանված պահանջների խախտում,

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված «Բժշկական նշանակության արտադրատեսակների մաքրմանը, ախտահանմանը, նախամանրէազերծման մշակմանը և մանրէազերծմանը ներկայացվող պահանջներ» N 3.1.1-029-2015 սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր,

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի N 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր:

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և

հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր,

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 25-Ն հրամանով հաստատված «Բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանմանը, սպառման թափոնների հավաքմանը, պահմանը, փոխադրմանը, մշակմանը, վերամշակմանը, օգտահանմանը, վնասազերծմանը և թաղմանը, բնակավայրերի տարածքների սանիտարական պահպանման, սպառման, թափոնների գործածության ոլորտում աշխատանքներ իրականացնող անձնակազմի աշխատանքային անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.1.7.002-09 սանիտարական կանոններ և նորմեր,

✓ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 դեկտեմբերի 2002թ N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերի և կանոնների 3.2 կետով սահմանված պահանջների խախտում: Պատճառը՝ համայնքների ղեկավարների իրազեկվածության բացակայությունն է, ինչպես նաև ջրամատակարարման համակարգերի սպասարկման ոչ պատշաճ իրականացումը:

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է **146** որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է **7 170 000** ՀՀ դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է **5570000** ՀՀ դրամ:

• **Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում** տնտեսավարող սուբյեկտների կողմից ըստ տարածվածության առավել հաճախ կատարվող օրենսդրության խախտումները կապված են աշխատողներին աշխատանքի կոլեկտիվ և անհատական պաշպանության միջոցների տրամադրման և կիրառման հետ: Դրանք են.

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

✓ ստուգայցերի արդյունքում հայտնաբերված հաճախ կատարվող խախտումներից են՝ հաճախորդների հետ շփվող անձանց դիմակներ չկրելը, ջերմաչափման գրանցամատյանի համապատասխանությունը ձևաչափին, փակվող աղբամանների բացակայություն, ախտահանման մատյանի բացակայությունը կամ համապատասխանությունը ձևաչափին: Խախտումների հիմնական պատճառն է իրազեկված չլինելը:

✓ աշխատողների աշխատանքից ազատման դեպքում գործատուի կողմից չտրամադրվող դրամական փոխհատուցումները (վերջնահաշվարկ, արձակման նպաստ) խախտվում են նաև աշխատանքից ազատատելուց պայմանագրի լուծման ժամկետները, տնտեսվարողների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ իրագործումը:

✓ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի պահանջը, այն է՝ սահմանված ժամկետում չի հաշվարկվել և չի վճարվել աշխատավարձ,

✓ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 248-րդ հոդվածի 3-րդ մասով, 261-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 23-ի N 458-Ն որոշման 2-րդ հավելվածի 2-րդ բաժնով սահմանված պահանջները,

✓ Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 23-ի թիվ 458-Ն որոշման, Տեղի ունեցած դժբախտ դեպքի պատճառները պարզելու նպատակով իրականացված ծառայողական քննության նյութերը Տեսչական մարմին չներկայացնելը:

Արդյունքում տնտեսավարող սուբյեկտների և դրանց ծառայողների նկատմամբ որպես պատասխանատվության միջոցներ կիրառվել են նախազգուշացումներ և տուգանքներ, ընդունվել է **64** որոշում տույժ նշանակելու մասին, ընդհանուր առմամբ սահմանվել է **4 096 444** ՀՀ դրամի տուգանք: ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է **3321869** ՀՀ դրամ:

VIII. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Տեսչական մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ), ներկայացվել են 30 օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ և տրվել կարծիքներ: Միաժամանակ, նոր կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ իրավիճակի ընթացքում աշխատանքային կարգով բազմաթիվ առաջարկություններ են ներկայացվել պարետի որոշումների, գործունեության տարբեր տեսակների համար մշակվող անվտանգության կանոնների, մեթոդական ցուցումների և ներկայացված այլ նախագծերի վերաբերյալ: Այսպես.

Դեղերի շրջանառության և դեղագործական գործունեության ոլորտում՝

- ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության տարածք դեղեր, դեղանյութեր, դեղաբուսական հումք և հետազոտվող դեղագործական արտադրանք ներմուծելու և Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու, ներմուծման կամ արտահանման նպատակով փորձաքննության իրականացման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 202-Ն որոշման հավելված 1-ի 36-րդ կետի համաձայն՝ ներմուծման հավաստագրի տրամադրումը մերժվելու դեպքում դեղագործական արտադրանքը չի կարող իրացվել Հայաստանի Հանրապետությունում և (կամ) ենթակա է ոչնչացման կամ արտահանման: Նույն կետի համաձայն՝ հայտատուն հավաստագրի տրամադրման մերժման վերաբերյալ հրամանն ստանալուց հետո լիազոր մարմնին գրավոր տեղեկացնում է ոչնչացման կամ արտահանման մասին՝ 90 աշխատանքային օրվա ընթացքում՝ կցելով ոչնչացումը կամ արտահանումը հավաստող համապատասխան փաստաթղթերը:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- Հայտատուի կողմից վերոնշյալ պահանջի կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ առողջապահության նախարարությանը համապատասխան գրությամբ առաջարկվել է հանդես գալ նախաձեռնությամբ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 202-Ն որոշման մեջ իրականացնել համապատասխան փոփոխություն, որով կսահմանվեն «ՀՀ առողջապահության նախարարության կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին պարտադիր կարգով տրամադրվի հավաստագրի տրամադրման մերժման հրամանի մեկ օրինակը» և «հայտատուի կողմից ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին պարտադիր կարգով տրամադրվի դեղերի ոչնչացումը կամ արտահանումը հավաստող համապատասխան փաստաթղթերը» դրույթները:
- «Դեղերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացվել է 3-րդ հոդվածի՝ օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետում «համար» բառից հետո ավելացնել. «բացառությամբ թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի»:
- Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով ներկայացվել է առաջարկ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում սահմանել պատասխանատվության միջոցներ տնտեսավարողների նկատմամբ նախազգուշացման և/կամ տուգանքների տեսքով պայմանավորված դեղերի շրջանառության բնագավառում լիցենզիայի պայմանների և պահանջների խախտման վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով ներկայացվել է առաջարկ՝ «Լիցենզավորման մասին օրենքում» սահմանել կամ «Դեղերի մասին» օրենքում հստակեցնել, որ դեղերի շրջանառության բնագավառում լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը,

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ներկայացվել է առաջարկ՝ ԵԱՏՄ անդամ պետություններից ՀՀ ներմուծվող դեղերի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու և դեղերի շուկայի նկատմամբ պատշաճ ու հնարավորինս ամբողջական վերահսկողություն սահմանելու նպատակով առաջարկվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի **N 202-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները, ըստ որի Պետական եկամուտների կոմիտեի կողմից** ԵԱՏՄ-ի անդամ երկրից Հայաստանի Հանրապետություն ներմուծված դեղերի մասին (դեղը մաքսային սահմանը հատելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում) տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին:

Բժշկական սպասարկման ոլորտում՝

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն է ներկայացվել՝ «Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության դեմ պայքարի 2020-2023 թվականների միջոցառումների ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» առաջարկություն,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ՝ մեռելածնության դեպքերում դիակների թաղումներ կազմակերպելու օրենսդրական խոչընդոտների և դրանց վերացման ուղղությամբ ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ՝ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) հետևանքով անձի մահվան դեպքում դիակի հուղարկավորությանը նախապատրաստելու և հուղարկավորությունը կազմակերպելու օրենսդրական խոչընդոտների և դրանց վերացման ուղղությամբ ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1024-Ն որոշման 5-րդ հավելվածում և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի օգոստոսի 7-ի N 14-Ն և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2008 թվականի օգոստոսի 11-ի «Բժշկական հաստատությունները ժամանակավոր անաշխատունակության թերթիկների ձևաթղթերով ապահովելու կարգը, ժամանակավոր անաշխատունակության թերթիկները լրացնելու և քաղաքացիներին տրամադրելու հետ կապված բժշկական հաստատության ներքին ընթացակարգը հաստատելու մասին» N 109-Ն համատեղ հրամանում առկա ինքնամեկուսացման վայրերում գտնվող առողջ անձանց ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տրամադրման օրենսդրական խոչընդոտների վերացման ուղղությամբ ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 18-ի «Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանում պացիենտի վարման գործելակարգը հաստատելու մասին» N 44-Ն հրամանի մեջ փոփոխության անհրաժեշտության մասին:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում՝

- Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի ապրիլի 4-ի թիվ 1/09/3912-2020 գրությամբ ներկայացված «Ասբեստ պարունակող թափոնների կառավարման ուղեցույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմից 2020 թվականի մարտի 30-ին ստացված թիվ 02/05.4/12004-2020 հանձնարարականին կից

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

ներկայացված «Ալկոհոլային խմիչքների իրացման, սպառման, օգտագործման, գովազդի և առողջության վնասակարության մասին տեղեկատվության տրամադրման մասին» ՀՀ օրենքների նախագծերի,

- ««Ոչնչացում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների ոչնչացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 901 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծի վերաբերյալ առաջարկություն,
- ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, ինչպես նաև նախագծերի ընդունման հիմնավորումը և տեղեկանքները:

Աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման ոլորտում՝

- «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում աշխատանքի պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ իրականացվող հսկողության (վերահսկողության)» նախագծի վերաբերյալ,
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագծերի վերաբերյալ,
- Նոր կորոնավիրուսային վարակը (COVID-19) կանխելու և աշխատողների համար անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ, ինչպես նաև բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովելու նպատակով 2020 թվականի մարտի 17-ին մշակվել է ՀՀ պարետի ցուցման նախագիծ,

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 17-ի Ց/2-2020թ. ցուցման համաձայն 2020 թվականի մարտի 18-ին մշակվել է արտադրական ընկերություններում (50 և ավելի աշխատակից ունեցող) սանիտարահամաճարակային կանոնների պահպանման, դրանց խախտման դեպքում հնարավոր վտանգների և աշխատանքների կազմակերպման ուղեցույցի նախագիծ,
- Հայաստանի Հանրապետության պարետի № Ց/17-2020 ցուցումով սահմանված Կազմակերպություններում սանիտարահամաճարակային կանոնների պահպանման, դրանց խախտման դեպքում հնարավոր վտանգների և աշխատանքների կազմակերպման վերաբերյալ ուղեցույցի (այսուհետ՝ Ուղեցույց) պարտադիր պահանջների կատարման նկատմամբ մշտադիտարկում և վերահսկողություն իրականացնելու նպատակով (ՀՀ պարետի № Ց/17-2020 ցուցման 2-րդ կետ) մշակվել է 2020 թվականի մարտի 20-ին ընդունված հրահանգչական նամակը,
- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացվեն են առաջարկություններ, մասնավորապես՝ առաջարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1978-Լ որոշմամբ սահմանված «երեխայի իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը» գործողության համակատարող սահմանել նաև ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին,
- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է ներկայացվել վերջիններիս կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգը

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ,

- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է ներկայացվել ԱՄԿ թիվ 138 կոնվենցիայի վերաբերյալ ԱՄԿ փորձագետների կոմիտեի հարցադրումների և դիտարկումների վերաբերյալ տեղեկատվությունը,
- Պարետի 2020 թվականի հունիսի 10-ի № Ց/107-2020 ցուցման համաձայն՝ առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «**Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին»** N 298-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու վերաբերյալ:
- Առաջարկը ներկայացվել է Պարետի կողմից սահմանված անվտանգության կանոնների փաստացի պահպանումը պարզելու նպատակով իրականացվող վերահսկողության արդյունքում հայտնաբերված զգալի խախտումների առկայության դեպքում Տեսչական մարմնի աշխատանքային խմբին առանձին իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի գործունեությունն անմիջապես արգելելու լիազորություն վերապահելու նպատակով,
- ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի գլխավոր կոնֆերանսի արձանագրության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, ինչպես նաև աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքին՝ EmployeeProtect.am օնլայն հարթակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և վերջիններիս կողմից կազմակերպված «Աշխատանքի պաշտպանություն և հիգիենա» թեմայով Սինգապուրյան 6-րդ Կոնֆերանսի վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության կողմից՝

- Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի փետրվարի 15-ի թիվ 01/1475-20 գրությամբ ՀՀ

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

արդարադատության նախարարություն է ներկայացվել «Օրենսդրական ակտի և կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կազմված ամփոփաթերթի լրացված տարբերակը,

- Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 1-ի թիվ 10.2/7224-2020 գրությամբ ներկայացված «Օրենսդրական ակտի և կառավարության որոշման վերաբերյալ պաշտոնական պարզաբանում տվող պետական կառավարման համակարգի մարմինների և համապատասխան բնագավառների ցանկը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ,
- Արդարադատության նախարարի 2020 թվականի ապրիլի 3-ի թիվ 10.2/7473-2020 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի թիվ 667-Լ որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի,
- Տեսչական մարմնի կողմից աշխատանքային կարգով քննարկվել և կարծիքներ են տրվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի բարեփոխումների հայեցակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման, «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների, «Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և օրդինատուրայի մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին, որոնցից որևէ մեկով առկա ուսուցմամբ սովորողի (ուսանողի) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկը ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման և «Վարչական իրավախախտումների

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ,

Սահմանված ժամկետներում տեսչական մարմնի մասնագետների կողմից քննարկվել են ՀՀ կառավարությունից, նախարարություններից և մարմիններից ստացված օրենքների, կառավարության որոշումների, այլ իրավական, տեխնիկական փաստաթղթերի նախագծերը և տրամադրվել համապատասխան կարծիք:

IX. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

2020 թվականի ընթացքում Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատողների դեմ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացվել են **64 դիմում (բողոքներ)**, որից **29**-ը **վերադասության** կարգով, **35**-ը **դատական** կարգով (Հավելված 1): Այսպես, ըստ ոլորտների.

- դեղերի շրջանառության վերահսկողության ոլորտում **21**,
- բժշկական սպասարկման վերահսկողության ոլորտում **8**,
- բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման ոլորտում **23**,
- աշխատանքի անվտանգության, դեղերի շրջանառության վերահսկողության ոլորտում **12**:

Վերադասության կարգով ներկայացված **29** բողոքից 2-ը վերադարձվել է, քննվել է 24-ը, որից բավարարվել/բեկանվել է **8**-ը, մերժվել է 15-ը, կարճվել են **1**-ը, 3 բողոք դեռևս ընթացքում է:

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Տարվա ընթացքում **դատական** գործերի **(**նաև նախկինում ներկայացված**)** վերաբերյալ կայացվել է **36** վճիռ, որից 25 վճիռ (տոկոսային հարաբերությամբ՝ 69,5%) կայացվել է նախորդ տարիներին Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատողների դեմ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացված դիմում-բողոքներից :

Արդյունքում, ի օգուտ Տեսչական մարմնի կայացվել է 11 վճիռ, որից 8 վճիռ (տոկոսային հարաբերությամբ՝ 72,73%) կայացվել է նախորդ տարիներին Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատողների դեմ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացված դիմում-բողոքներից, իսկ 24 վճիռ կայացվել է ի օգուտ տնտեսավարող սուբյեկտի, որից 17 վճիռ (տոկոսային հարաբերությամբ՝ 70,84%) կայացվել է նախորդ տարիներին Տեսչական մարմնի, Տեսչական մարմնի աշխատողների դեմ տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացված դիմում-բողոքներից:

X. ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՉՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Տեսչական մարմինը, ինչպես մյուս պետական գերատեսչությունները, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից անցել է 24/7 աշխատանքային ռեժիմի՝ իրականացնելով Տեսչական մարմնի ռազմական դրության պլանի (այսուհետ Պլան) գործողություններին և տրված հանձնարարականներին համապատասխան աշխատանքներ:

Բացի վերը նշված Պլանով նախատեսված աշխատանքներից՝ Տեսչական մարմինը պատերազմի օրերին, կամավորական սկզբունքներով.

- ձևավորել է դեղագետ փորձագետների խումբ, ովքեր պատերազմի օրերին աջակցություն էին ցուցաբերում ՀՀ ՊՆ դեղերի հումանիտար օգնության բազաներում, ժամկետանց, ոչ պիտանի դեղերի շրջանառության դրանց պահպանման հսկողություն իրականացնելով,

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107
ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

- ձևավորել է կամավորական խումբ և մեկնել Արցախ՝ Ստեփանակերտում իրականացրել հումանիտաիր օգնության տեղաբաշխման աշխատանքներ,

- ձևավորել է կամավորական խումբ և աջակցություն ցուցաբերել ՀՀ ԱՆ հումանիտար օգնության պահեստների մեծածավալ աշխատանքների կազմակերպմանը,

- ձևավորել է համաճարակաբանների կամավորական խումբ, ովքեր պարբերաբար իրազեկման աշխատանքներ են իրականացրել և իրականացնում Արցախից ՀՀ ժամանակավոր կացության մեր հայրենակիցների տեղակայման վայրերում:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

☏ (374-10) 65-05-53 էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ 8107

ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129